

ԶԱՆԱԶԱՆ ԼՐԻՔԵՐ

ՎԵՀԱՓՈՐ. ԿՈԹՈՂԼԿՈՍԸ մարտի 25-ին առաւտօքը կարսի երկաթուղիով
ուղերձեց Սանահին Ալէքսանդրապոլի վրայով էջմիածին վերագառ-
նալու մրադրութեամբ. Սանահին և Ալէքսանդրապոլ Վեհափառ-
մդապիր է մնալ երկու երկու օր:

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ 2-րդ ԱՐՄԵԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՄ, Կազմում է Կովկասում 2-րդ
արմեական կորպուս, առաջինի մէջ մղնելու են 20-րդ և 39-րդ հե-
տեակ զօրաբաժինները (դիւխզիաններ) իրենց արտիլերիալով և 1-ն-
ու 2-րդ կովկասեան քաղաքային զօրաբաժինները, 2-րդ կորպուսը
մղնելու են Կովկասեան գրենադերեան, 21-րդ հետեակ զօրաբաժին-
ները իրենց արտիլերիալով, Կովկասեան հեծեալների զօրաբաժինը և
հրացանաձիգ (սորելկովալա) բրիգադը, Կորպուսներից դուրս մնալու
են պահեստի և տեղական զօրքերը և մի քանի կազակալին մասերը
Նըրբորդ կորպուսի հրամանադրը նշանակում է ալֆմեանը՝ գեն.
Զեղման, առաջնորդ՝ գեները. լէքո. լիլի. Միլի. Կալի. Ամիրաջլիլի.

Թթվական ՆԱՀԱՆԳԱՊԵՏ, ԲԵԿՈՎԻ ուղղ, նշանակած է գնդապետ Խան
Նիկոլաեսիչ Սէէշին, Վերջինս Մոսկվայի նահանգի ազնւականներից
է, սպազութիւն սրացաւ 1885-ին և ծառակեց Նորին Մեծութեան
լէր-գւարդիակի հուսարեան գնդում, իշխ. Գ. Ս. Գալիցինի կովկա-
սեան կառավարչապետ նշանակւելով՝ Սէէշինը դրւեց սորա կարգա-
դրութեան ուակ, 1898-ին եղաւ գնդապետ և նշանակւեց Կովկասեան
գորքերի հրամանադրարի ազիւտանոր, հաշելով գւարդիեան հեծելա-
գորի մէջ. Նա միշտ ուղեկցել է իշխան կառավարչապետին՝ սորա
բուր ուղերութիւնների ժամանակ կովկասում, իսկ վերջերս գոր-
ծօն մասնակցութիւն ունեցաւ Թիֆլիս քաղաքի սանիդրարական հե-
րազուութեան համար նշանակւած լանձնափողովի մէջ.

ՖԻՆԱՆՏԻԱ. Կամսերական հրամանով նոր կանոններ են դրւած օրէնք-
ներ մշակելու և հրադարակելու եղանակի վերաբերմամբ այն խնդիր-
ների մասին, որոնք Ֆինլանդիային վերաբերելով հանդիրձ՝ նաև
ընդհանուր կամրութեան են վերաբերում. Նոր կանոնները նպառակ-
ունին աւելի միակերպութիւն առաջ բերելու ֆինլանդական սէլմին-

տալով միայն կարծիք լակոնելու իրաւունք արդ խնդիրների վերաբերմանը:

— Եսրբին գործոց մինիստրը կարգադրել է, որ չին նամակաղորշմերի գրալ 1891-ին որւած մինիստրական կարգադրութեամբ կալսերական նշանների հետ մետափին եղող շրջանակիները, որոնք միայն ֆինլանդիակի համար էր, պիտի վերացմեն և աւուշեր ֆինլանդիական պիտի գործածեն հանրա-կալսերական պոստալին նշանները:

ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԽՆԴԻՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ,

Ոիթիլս կառավարութեան կարգադրութեամբ գաղոփ են ենթարկած քաղաքացիութիւն պ. հւանդուլեան, վարչութեան նախակին անդամներ պատ. իւանենկօ և Անդրեյչե և ներկալիս անդամներ՝ Խոսրովիան և իշխ. Ալ. Արզութեան:

Հուշի Քաղաքալին խորհրդարանի քաղուուղիք ընդուած է պ. Վերենվկին, որը Շուշաւ գաւառապետի օգնական է եղած:

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Երկրիս իշխան կառավարչական ող ներքին գործոց մինիստրի հետ միասին մշտիկել է հայոց բարեգործական ընկերութիւնների համար նոր կանոնադրութիւնն, որ և Թիֆլիսի նահանգապետի կողմից առաջարկել է Հայոց բարեգործական ընկերութեան կենորոնին, և Բաքրաչ նահանգապետի կողմից՝ Բաքրաչ Մարդասրական ընկերութեանն, Նոր կանոնադրութեան ծրագրով վերացւում է հայոց բարեգործ. ընկերութիւնների կանոնադրութիւններից կրթական մասը (գրադարան-ընթերցարաններ, օժանդակութիւն աշակերտներին-ուսանողներին, դպրոցներին), բայց և նպագակ է զնւում նիթականապէս օգնել հայութաւորչականներին՝ հագուստով, կերպկրով, ապաստարաններով, գործ ճարելով, գործիներ գնելու օգնութիւնով, արդիւնագործութեան վաճառութիւնով, բժշկական օգնութիւնով, աղքատանոցներով, որանոցներով, անկարողներին հայրենիք վերադառնալու միջոց տալով. Ամեն մի ընկերութիւն պիտի գործի միմիան ան քնակիչների համար, ուր ընկերութիւնը հաստատւած է, այդպիսով կովկասեան հայոց բարեգ. ընկերութեան ճիւղերը կարող են դառնալ անկախ մարմիններ, իսկ ալժմեան կենորոնը պիտի կոչւի «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութիւն», Բաքրանը՝ «Բաքրաչ հայոց բարեգործական ընկերութիւն», Անդամականարը և ոռութի է. ընկերութիւնները կարող են ընդունել նույներ՝ փողով և իրերով, այլ և կոտաներով. (Կոնցերտներ և ալլն բաց է թողած). Գործավարութիւնը և գրագորութիւնը կատարւելու է ոռուսիրէն, Ընկերութիւնների փակւելու գէպքում գուքը անցնումէ ամեն մէկը իւր քաղաքի ինքնավարութեան, որը կոտաներով թողածները գործադրում է կոտաների դրամադրութեան համաձակն, մնացածը՝ իւր հայեցողութեամբ:

Թիֆլիսի Կենտրոնը ապրիլի 1-ին արրակարգ ընդհանուր ժողովում միաձան որոշեց ընդունել առաջարկեած նոր կանոնադրութիւնը՝ որը սակայն պիտի զրկվի ի հաստաբութիւն։ իսկ մինչև այդ՝ չին ընկերութիւնը դեռ կշարունակի իւր գործունէութիւնը ցափմեան կանոնադրութեամբ—Բաքվաւ ընկերութիւնը իւր որոշումը կալացնելու է ապրիլի 3-ին նշանակւած արդակարգ ընդհանուր ժողովում։

Թիֆլիսի կենտրոնի ընդհանուր ժողովի մէջ գլխաւոր հարցը այս եղաւ թէ ժողովը ձեռնհամ է արդեօք ինքը վճռելու նոր կանոնադրութեան հարցը, քանի որ չինը դորանով խափանւում է, իսկ խափանման հարցը, ըստ ցափմեան կանոնադրութեան 45-ի, կարելի է վճռել միան «ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճռով»։ Նոքա մոռանում էին, որ ժողովը չէր եկած վճռելու ընկերութեան խափանմա, ալ միան կանոնադրութեան փափոխման ինդիրը, որը նոչն 45-ի համաձայն, վճռում է կենտրոնի ընդհանուր ժողովը միայն և ոչ կենտրոնը իւր բոլոր ճիւղերով։ Քայց թէ նոր կանոնադրութեան չընդունվիր պիտի առաջադներ ընկերութեան խափանումը—այդ արդէն պիտի լինէր force-մայեսթ-ի գորութեամբ։ Իսկ ինչ վերաբերում է ընկերութեան գոյքին, որի մասին կարգադրութիւն անելու համար, խափանման դէպրում, կանոնադրութեան § 50-ի համաձայն, նոչնպէս պահանջւում է ընկերութեան (կենտրոնի և ճիւղերի) բոլոր անդամների երկու երրորդականի վճռու, այդ ինդիրը աւելորդ էր լուզել, քանի որ քէարկելի առարկան ոչ թէ ընկերութեան խափանումն էր, ալ կանոնադրութեան փոփոխութիւնը կառավարութեան կողմից առաջարկւած ծրագրի համաձայն։ Այն գումարները և գուքերը, որոնք կարող են պատկանել միմիանցափմեան կանոնադրութեամբ զործող ընկերութեան և ոչ նոր կանոնադրութեամբ կերպարանափոխուող ընկերութեան, —ալգախիս գումարներն ու գուքերը բնականան է որ պիտի լիկվիդացիան ենթարկւեն համաձայն նւիրաբուների և աւանդ տւողների պայմաններին։ օրինակ, պ. Գ. Սունդուկեանցի ընկերութեանը պայմանական կերպով պիտի տւած գումարը պիտի վերադարձի իրեն։ Նոչնպէս պ. Սմբատ Շահազիզի ոււած գումարը «Արովեան-Նազարեան» ֆոնդի համար ընկերութեան սեփականութիւնը չէ, ուրեմն պիտի ալժմից ետ տրիւսեփականադիրոջ (պ. Շահազիզին)։ Քայց Խուզաղեանի կրակով թողածը պիտի լարաբեկի, որովհերև նա պիտի անցնէր Ներս։ Պարոցին միմիան ընկերութեան խափանման և ոչ նաև կանոնադրութեան փոփոխման դէպքում։ իսկ կրակի համաձայն՝ կրակակատարի անւանմի բարեգործական հիմնարկութիւն պիտի հիմնւի Թիֆլիսում, և շատ ընական է որ այդ կրակի աւանդը պիտի անցնի ապագաւ «Թիֆլիսի»

Հալոց բարեգ. ընկերութեանու իսկ եթէ կան գումարներ, որոնք նշանակւած են, դիցուք, թոշակաւորներ պահելու համար, որ նոր կանոնադրութեամբ այլ ես չի կարելի, արդպիսի գումարների մասին կարգադրելու համար պէտք է ալժմից դիմել նաև բոլոր ճիւղերին և բոլոր անդամների $\frac{2}{3}$ ձախով չառկացնել կանոնադրութեամբ թուլառրած նպարակներին վերջնականացէս. Նոյնպէս փառելու է նաև այն գումարների հետ, որոնք լառուկ նշանակութիւն չունեն և գուք են ոչ թէ Ընկերութեան Թիֆլիսի ճիւղի (=կենտրոնի), այլ ամբողջ ընկերութեան. Շառ ընական է որ ընկերութեան գրադարանը նվթերցարաններից ամեն մէկը պիտի նկատել որպէս գուք հարահար ճիւղերի, և օրինակ, կարգադրութիւն անելը Շուշաւէ ճիւղի գրադարան-ընթերցարանի համար պիտի պարկանի նոյն ճիւղի ընդհանուր ժողովին, Թիֆլիսինը՝ Կենտրոնի ընդհանուր ժողովին, և այլն. Ընկերութեան զուգերից ոմանք, ուրեմն, ըստ մեզ, իրենց լիկվիդացիակի համար կարու են ընկերութեան բոլոր անդամների $\frac{2}{3}$ -ի հաւանութեանը, իսկ ոմանք՝ ամեն մի ճիւղի անդամների $\frac{2}{3}$ -ի հաւանութեանը:

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. Ընկերութիւնը ԿՈՎԿԱՍՈՂԻՄ ունեցաւ իւր տարեկան ընդհանուր ժողովը ներկայ փետրուարի 4 և 21-ին, Խորհրդի բաւած հաշւի համաձայն ընկերութեան Թիֆլիսի ճիւղի (Կենտրոն) մուտք եղած է 1899 թ.ին 7.210 ռ., իսկ մացորդներով 1898 թւականից 11.706 ռուբլի 18 կոպէկ. 1899-ի մուտքը կազմել են գոկոսներ անձեռնելի գումարների 2.550 ռ., գոկոսներ Աբովեան-Նազարեան գումարի 500 ռ., անդամավճար 300 անդամի 1500 ռ., երեկովից 2000 ռ., Տէքրներ 500 ռ., ընթերցարան-գրադարանից 160 ռուբլի—Ծախք եղած է 10.306 ռ. 18 կոպ. այս գումարից որւած են (Կոպէկները չաշւելով) I. Թոշակներ Թիֆլիսի դպրոցներում աշակերտոններից 47 հոգու (60-ական ոռուբլի) և Ռուսիակի սարձրագուն դպրոցների հաջուսանողներին (120-ական ոռուբլի), որպէս նաև ժամանակաւոր և միանւագ նպաստներ այլ և այլ աշակերդների և ուսանողների (1109 ռ.) Ընդամենը 4.649 ռ.. II. Տառապեաններին 900 ռ.. III. Գրադարան-ընթերցարանին 2.405 ռ.. IV. Դիւանական ծախք 1.295 ռուբլի. V. Աբովեան-Նազարեան գումարի գոկոսներից մացորդ 796 ռուբ. 96 կոպ., VI. Պետական $5^{\circ}/_0$ -ը 175 ռ. և անձեռնելի գումարի մուտքի մացորդից $5^{\circ}/_0$ -ը 85 ռ.. Մնում է 1400 ռ. որ պիտի լարկացւի դաղթականաց աշակերդների պահպանութեան 1900 թւականի ընթացքում:

Հասրաւուեցին ընկերութեան ճիւղերի նախահաշիւները 1899-ի համար, միան թէ Բաթումի ճիւղի վերաբերմամբ որոշեց որ Կե-

որոնին հարուցանելիք պարուքի մնացորդ չարջ 1200 ռուբլին վճարւի տարէցտարի, 1899-ին 300 ռուբլի, մերժելով Բաթումի ճիւղի ընդանուր ժողովի անոնցի խնդիրքը և այլ Առ. Խարուխանանի փաստաբանութիւնը՝ նէիրել ճիւղին այդ պարուը, մոռանելով որ կենդրոնի ընդհ. ժողովը տարիներ առաջ, փոխ էր ուեւլ Բաթումի ճիւղին 3000 ռ. անձնոնելի գումարներից:

Փետրւ. 21-ին ժողովը զբաղւեց Խուղաղեանի կոտակի գործով և երկար շարք ընդութիւններով Անցկալ ապրիլին ընդոււած լանձնաժողովը, որին դրւած էր Հուղագիւնք: անուենով հաստափութիւն հիմնելու առաջարկները քննել, ներկաւացրեց իւր զեկուցումը: Յանձնաժողովը եղած առաջարկներին առաւելութիւն դւել էր որբանոցի մասին եղած առաջարկին, որի հիմունքները լանձնաժողովը ծրագրած ներկաւացրեց ընդհ. ժողովին: Ապա ընկերութեան խորհուրդը առաջարկել էր ապաստարան հիմնել, խոկ լանձնաժողովի երկու անդամները՝ ընկերութեան դրագարանը հարստացնել Խուղաղեանի կոտակի գումարների արդինքով: Յանձնաժողովի զեկուցագիրը կազմւած էր հանդամանօրէն և պարզ Ընդհանուր ժողովի մէջ սակայն ձաներ լուսեցին օգուտ խնդրի լիքածդման Մէկը (Սարուխաննեան) առաջ բերաւ այն թէ իւր զեկուցագիր բաւականաչափ պարզ չի եւեռմ թէ ինչ տիպարի հաստարութիւններ են առաջարկւածները: Այդ հերքւեց և առարկողը, որբանոցին վերաբերեալը էնու առաւ իւր խօսքը: Մի երկրորդը՝ (Հ. Առաքելեան) լայտնեց թէ պէտք է լիքածդել զեկուցագրի քննութիւնը, որովհետ խուղաղեանի թողած քարւանսարան պիտի վերանորոգի, եղած դրամի մեծ մասը պիտի զնայ նորա վերաշխնութեան: Այդ առարկողին պարագաները կամացին որ քարւանսարան որ վերաշխնէի աւելի ևս եկամուռ պիտի բերի և ոչ աւելի պակաս, հետեապէս այդ հանդամանքը չի կարող մեզ խանդարիլ որ կանգ առնենք, օրինակի համար, որբանոցի վրայ: Առարկող եղաւ նաև (Շահնիկղեան) թէ պէտք է լիքածդել, որովհետ բարեկործական հիմնարկութիւնների համար նորմալ կանոնադրութիւնն է մշակւած կառավարութեան կողմից, ու լաւ կը լինէր սպասել՝ աչքի առաջ ունենալու համար նորմալ կանոնադրութիւնը: Այս վերջին առարկութիւնը միակ բանաւորը թւաց ժողովականներին, որոնք որոշեցին մի առժամանակ լիքածդել խնդրի քննութիւնը: Ապա երկար վիճւեց այս թէ լիքածդելով՝ ում լանձնար գործը վճռւեց թողնել գոյծը նոյն լանձնաժողովի ձեռքում, լրացնելով այն նոր չորս անդամներով և անդէս, որ խորհրդի անդամների հետ միասին խորհրդակցւի, զեկուցու պատրաստւի ու տպւի ու խնդրի վերջնական լուծման համար մի քանի ամսից լիքուու ընդհանուր ժողով գումարուի:

Ժողովը ապա զբարւեց ընտրաւթիւններով. Ներկայ էին ընդամենը 43 անդամ, մինչդեռ պէտք էր ընտրել 19 հօգի! Հասկանալի է այս ծերողամտութիւնը որով պրոֆի վերաբերելու ժողովը դէպի ընդուել կամեցզներից ոմանք, Ահա ընտրաւթիւնների աբդիւնքը.

Նախագահ ընդհանուր ժողովի՝

թժշկ. Բ. Նաւասարդեան 33 սպ., 9 սն (վերընտրւած)

Խորհրդի անդամ Ալ. Ալանեան 36 » 7 » »

Ալ. Երիցփոխեան 34 » 9 » »

պահանջ- | Յովս. Ամիրխանեան 33 » 9 » (ընտրւած)

ում է ձաւ. | Յ. Մելիք Բախորամեան 30 » 12 » »

Ների ՚/՝-ը. | Փիլ. Վարդաղարեան 29 » 13 » (վերընտրւած)

Աւ. Եղեկեան 26 » 16 » (ոչ ընտրւած)

Խորհրդի փոխ անդամներ՝

Ստ. Մալխատեան 39 » 3 » (ընտրւած)

Ալոհս. Հեծուրեան 31 » 10 » »

Գէորգ Ղարաջեան 30 » 12 » »

Նիկ. Արրահամեան 30 » 12 » »

Վերաստուգող մասնաժողովի անդամ-

Ներ. Սարգ. Խարազեան 38 » 4 » »

Կար. Շիրինեան 35 » 7 » »

Խաչ. Տէր-Մարգարեան 30 » 12 » »

Ալ. Շահիկեան 30 » 12 » »

Գրադարանական մասնաժողովի ան-

դամներ՝ վերընտրւեցին նախկին անդամները:

Խուղաղեանի կոտակի ճանձնաժողովը (որի անդամներն են՝ թժշկ. Ար. Զարգարեանց, թժշկ. Բ. Նաւասարդեանց, Եր. Լալակեան, Կարապետ Եաղուրեան, Վաս. Վարդանեան և Աւ. Արախսանեանց) լրացնելու համար քէարկւեցին՝

Ստ. Մալխատեան 41 սպ., 1 սն (ընտրւած)

Տիգ. Փիրումեան 33 » 9 » »

Սիմէօն Շահվերդեան 32 » 10 » »

Գէորգ Ղարաջեան 31 » 11 » »

Համբ. Առաքելեսն 29 » 13 » (ոչ ընտրւած):

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ II ՀԱՄԱԺՈՂՈՎԸ այս ժամանակ գումարեց Հայոցէլեկր և ուսեց նոր գոմարով մարտ 26-31. Ներկայ էին ընդամենը 20 ուսանող և 1 ուսանուհի, մեծ մասամբ Գերմանական համալսարաններից, 2-ը Ֆրանսիակից (Պարիզ և Նանսի) և 2-ը Զւիցերիակից (Ժնև և Ցյուրիխ): Շատերը չկարողացան դալ, Զեկուցումներ արին երեք հոգի (պապ, Նալբանդեան, Թոքաթլեան, Մ.

Յովհաննիսեան), Գործնական որոշումներից կարևորագուն էր՝ ամեն վեցամսեակին հրատարակել տեղեկագիր, որը պիտի պարունակի տեղեկութիւններ համաժողովի, ուսանողական խմբերի և ուսանողների մասին, ուսանողական խմբերի հաշվետութիւնը և հերաքրքիր տեղեկութիւններ ուսանողական կեանքից: Մի քանի ուսանողների պարօրինակ առաջարկութիւնը—հրատարակել տեղեկագրի տեղ մի պարբերական համդէս—մերժւեց, որովհետեւ զա անպարհառ կը չեղէր ուսանողական նողից և կ'տար նրան ուսանողական ինտերէսներից դուրս գործնական ընաւորութիւն:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԱԳԻՐԸ, Մի-երկու տարի առաջ Մուրճ՛ում հանկութիւն էինք լավունում, որ արդասահմանի հայ ուսանողների համաժողովը իւր հոգացողութեան առարկաներից մէկը շինէ հայ ուսանողութեան մասին ճշգրիտ և լիակատար տեղեկութիւններ ժողովելը: Ազդ ցանկալի բանը ալժմ իրագործւած ենք տեսնում: Արդասահմանի հայ ուսանողութեան Ա-րդ համաժողովից, որ կալացաւ Հարդելքերգում ներկա մարտին, սփացել ենք Գերմանիալի, Ֆրանսիալի և Զիփցէրիալի հայ ուսանողութեան մի վիճակագիրը, ուր անլիակատար են տեղեկութիւնները միայն Պարիզի և Ժընեվի նկատմամբ: Վիճակագրի համաձայն բոլոր հայ ուսանողների թիւը լիշեալ երեք երկիրներում է մօտաւորապէս 202, որից ամենաշատը Պարիզում (մօտ 98), Բերլինում (22), Ժընեվ (18), Լէպացի (11), Մոնպէլիէ (10), դասուց պակաս են Նանսի (9), Միւնիչն (8), Ցիւրիխ և Լոզան (6-ական), Դարմշտադ (4), Ֆրանքրիդ և Հալլե (3-ական), Գրէզզէն (2): Բրեսլաւ և Ենա (1-1), Ժընեվ նկատմամբ պիտի աւելիցնենք որ բոլոր հայ ուսանողների թիւը մօտ 40 է, բայց տեղեկութիւններ կան միայն լիշեալ 18-ի մասին (երեք սոքա իսկական ուսանողներն են): Գերմանիայում 55 հայ ուսանողներից 49-ը Ռուսիալից են, իսկ սոցանից՝ 45-ը Կովկասից: Ֆրանսիալի հայ ուսանողները ամենամեծ մասամբ Տաճկատանից են, Զիփցէրիալում՝ գրեթէ հաւասար թւով ազդ երկու երկրներից:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ, Բնասէր, հանդէս համասական, պատմական, լեզւաբանական և քննական, գործէն՝ կ. Յ. Բասմաջեան, աշխատակցութեամբ ազգալին և օգար արևելադիտաց, Բաժնեգինը տարհկան չորս զրքի համար 20 Գրանկ ամեն տեղ. իւրաքանչիւր զիրքն՝ առնըւագն 100 էջ է բաղկացեալ՝ կ'արժէ Գրանկ 6: Հասցէ Paris, Boulevard Rochech, uart, 112:

Թերթը սկսելու և լուս դեսնել ներկա մարտի վերջից, առալժմ վիճագրութեամբ միայն «քանի որ այս դեսակ զուգ մասնագիտական թերթ մը դակաւին չի կրնար» պահել ազգին ընդհանրութիւնն, այլ գիտնականք միայնու:

Թերթի բովանդակութեան մասին խմբագրական ծանուցման մէջ, որ դրկւած է մեզ լայրարարութեան թերթի ձեռվ, ասւած է հետեւալը.

Ինչպէս անունէն լարմի է, Բանասէրը պիտի խօսի զուր բանասիրական նիւթոց վրաւ. — Պիտի հրատարակէ մեր ազգակին հնախօսութեան, պատմութեան և մարենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ Պիտի տաէ թարգմանութիւններ ու քաղւածներ հայկական, ասորական, պարսկական, շօշական բեւեռագրաց և ազ արձանագրութիւննեց այն մասերէն՝ ուր մեր ազգին և երկրին նկատմամբ տեղեկութիւններ կամ թէ ակնարկութիւններ կան։ Պիտի զբաղի բնիկ պատմական ինդիբներով, հնագործելով մեր նախնեաց և օտար մարենագրութիւնները, Պիտի քննէ մեր մարենագրաց բնագիրներն և ազ հայերէն ձեռագիրներ, Պիտի հրատարակէ լեզւաբանական և սրուգաբանական նիւթոց վրաւ ուսումնասիրութիւններ.

Ասոնցմէ զար՝ Բանասէրը դեղեկութիւններ պիտի տաէ նաև արեւմբեան Եւրոպիոց զլիսաւոր մարենագարանաց մէջ պահւած հայերէն ձեռագրաց մասին, հրատարակելով անոնց կարարեալ ցուցակներն ալ.

Նոնսէտէս և օկիզբն պիտի դնէ հրատարակութեան մեր հմուտ աշխատակցին Գեր. Սուքիս Վ. Պարոնիանի այն ընդարձակ և կարեոր գործին՝ որուն պարարարութեան կ'աշխատի քսան դարձէ ի վեր, այս գործն է։ Մարենացուցակ Ֆը եւրոպական և ասիական օտար լեզուներով միան ցարդ հրատարակած ամէն ուսուակ գրքերու, օդուածներու և նմանեաց, որ կը խօսին մասնաւորաւիս կամ անցողարար Հայոց վրաւ—զանց չընելով դալ նաև անոնց համառօր ամփոփմն և կամ հարւածիկը։

Բանասէրը պիտի քննէ ևս այն ամէն բանասիրական նոր հրատարակութիւններ՝ որ կը դրկւին հանդիսիս դնօրինութեան,

ՌՈՒՍԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ.

Փետրւարի 8-ին Պետերբուրգի համալսարանում, աքուի ժամանակ, տեղի ունեցաւ դժգուհութիւնների ցուց ուսանողների կողմից զէպի ուշքորը. Նոյն արդ օրը փողոցում ուսանողները հանդիպեցին կազակների, որոնք արձակում գործեցին ուսանողների վրաւ. Արդ զէպից մորով ուսանողները մեծ մասամբ սկսեցին չկանախել դասախոսութիւններին. Պետերբուրգի ազ բարձրագուն դպրոցների ուսանողները հետևեցին նոյն Յօրինակին, որպէս նաև զէպից մը դասնեակ օր անց՝ Մոսկվաւի և բոլոր ալ համալսարանների ու բարձրագուն դպրոցների ուսանողները. Արդ ցուցերի դիմաց՝ բաղմաթիւ

ուսանողներ արձակւեցին և հայրենիք դրկւեցին թէ համալսարանական վարչութիւններից և թէ սոտիկանութեան կողմից։ Թագաւոր կալսկեր հրամանով, սական, խնդիրը քննելու համար նշանակւեց լանջնաժողով՝ նախկին պատերազմական մինիստր Վաննովկու նախարահութեամբ։ Սական դորանով կարզը չվերականգնեց և համալսարանական վարչութիւնները չալունեցին դադարեցումը դասախոսութիւնների, արձակումը բոլոր ուսանողների՝ առանձին խնդիրներով նորից ընդունելու պայմանով։

ԱՊԵՐԱԿԱՆ ՀԱՃԲԱԼԱԲԵՐՈՒ-ի մէջ դպւեց մանրամասն հազորդագրութիւն ուսանողական ալդ շարժումների պարծառների մասին։ Դորա համաձայն բոլոր բարձրագոյն դպրոցներում կան չափաւոր և ծալքալեղ կուսակցութիւններ, Պետերբուրգում շարժման զեկավարն է ալսպէս կոչւած կազմակերպիչ Կոմիտէն։ շալ ժման պարագլուխները կալանաւորւած են, շարժումներ եղան Պետերբուրգի, Մոսկավի, Կիեւի, Օդեսավի, Խարկովի, Եւրեւի (Դորպատ), Վարշաւավի և Տոմսկի համալսարաններում, Պետերբուրգի տեխնոլոգիական, լեռնալին և անդառավային ինստիտուտներում և Նոր-Խլեբսանդրիավի երկրագործական ուսումնարանում։ Պարագլուխները պահանջում են որ բոլոր արձակւածները նորից ետ ընդունեն և որ համալսարանական հսկողութիւնը (ինսպէկցիա) փոփոխի։ Արձակւել է ուսանողների բաւականին նշանաւոր մասը. արձակւածներից շատերը նորից կարող են ետ ընդունելու ուսումը աւարտելու համար. չուզիչների դէմ նաև այսուհետեւ ճեռք կ'առնեն օրէնքով սահմանած պարժական միջոցներ։

ՏԱԾԿԱՀԱՅԻՐ.

Առևլթանը, անգլիական գեսպանին բաւարարութիւն տալու համար, հրամակեց նորից բաց անել հալոց որբանոցները Պալու, Քիուքուսպ և Դիարբէքիր քաղաքներում։ Զէլթունի որբանոցը փակւած մի եղել.

Որուսաց կառավարութիւնը բանակցութիւններ է սկսել Բ. Գրան հետ։ Ռուսիակից վերադարձող փախստականներին նորից իրենց նախկին բնակառեղբուժ դեպաւորելու համար, բայց դեռ ևս Դուռը կարգադրութիւններ չի անելու սովորելու համար որ ալդ փախստականները իրենց նախկին դեղբուժ բնակեն։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿ. ՄՈՒԻՐԱԳԵԱՆ, Խզմիրի գաւառավային ժողովի քւէարկութեամբ լունւ. 27-ին ընդուեց Խզմիրի վիճակի հալոց առաջնորդ, և ինքը ընդունեց՝ ալդ ընդուաթիւնը։ Մելքիսեդեկի եպիսկոպոսը սորանով երկրորդ անդամն է դառնում ալդ վիճակի առաջնորդ, առաջին անգամ 1879-ից, մինչև 1889 թ.։ Մուրադեան եպիսկոպոսը վերջին դասը դարձին քարոզիչ էր և, Պոլսի Գաղութ-գիւղի եկեղեցում,

ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՎԱՆՈՒՄ զաղար է առել, որպէս երեսում է, սրուգ է թէ կաթոլիկութիւն ընդունածներից շատերը կրկին եռ են զառնում լուսաւորչական եկեղեցու գիրկը. Ալցելու հովի է զրկուու վան Ներսէս եպ. Ասլանեան, Ամենուրէք հանգանակութիւն է լինում չօղուր Վանակ կարօտեալների:

ԵՒԲՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ (—հովիւ), որպէս լաւոնի է, կարգւած է վեհ. կաթողիկոսի կողմից Գէորգ եպ. Խւթիւնեան, Վեհափառը նորերս բացատրած է և. Պոլսի Հայոց պատրիարքարանին, որ Գէորգ եպուի իրաւասութիւնը ուարածում է Աւարդիալի, Ֆրանսիալի, Անգլիալի և Ռումանիալի բաց ոչ նաև Բոլգարիալի հայ գաղթականութիւնների վրայ:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՈՒՆԵՐԻ, Բրուսալի առաջնորդ Արշարունի Տէր-Յովիաննէս, Ռոդոսուուի առաջնորդ Ալվազեան Տ. Յովսէփ, Խեսարիու առաջնորդ Տ. Տրդատ վարդապետները անցագրեր են վերցրած և սպասում են վեհ. Հայրապետի Թիֆլիսից Լշմիածին վերադառնալուն որ ճամրակ ընկնեն եպիսկոպոս ձեռնադրւելու.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ,

Ի հերևում Նորին Մեծութիւն կայսր Նիկոլայ II-ի 12-ն օգոստոսի անցեալ 1898-ի մանիքէորի մէջ լաւունած առաջարկի համար, Ռուսաց Կայսեր առաջարկով կոնֆերենցիա է գումարւելու Հոլլանդիալի Հաագ քաղաքում մայիսի 26-ին. Հրաւիրաթզթերը դրկել է Հոլլանդիալի կառավարութիւնը՝ Ռուսիալի գուած ցուցակի համաձան, Պարւասոր նախագահ նշանակւած է Հոլլանդիալի արրաքին զործերի մինիստրը, իսկ իսկական նախագահ ուսուաց դեսպանը Լոնդոնում՝ բարոն Փոն Միաալ Հրաւիրածների մէջ են նաև մասն անկախ պետութիւններ:

Հալլանդտկան կառավարութիւնը, նախաձեռնութեամբ ռուսաց կառավարութեան, Հրաւիրել է մատնակցութեան 19 եւրոպական պետութիւններ, և Հիւս. Ամերիկան, Միամ, Պարսկաստան, Չինաստան և Ասպոնիա:

Ֆրանսիալի ներկայացուցչութեան գլուխ լինելու է Լէօն Բուրժուա՝ արմատական կոսակցութեան զլւաւորը, նախկին արմատական մինիստրութիւնն նախագահը. — Գերմանիալի կողմից լինելու է նաև Ներբեր Բիսմարկը, Միւնիենի համալս. միշազգակին իրաւունքի պրոֆ. Շոէնգէլ:

Նորին Մեծութիւն թագաւոր-կայսրը, 12-ն օգոստ. 1898 թ. հաղորդագրութիւնից դէս սրացել է աշխարհքիս զանազան երկիրներից բաղմաթիւ արրավակութիւններ չնորհակալութեան. Ի պարագանան դոցա՝ Նորին Մեծութիւնը հրամակ գործոց

մինիստրին դրկել Խուախավի բոլոր ներկայացուցիչներին արքասահամանում 11 մարտի 1899 թ. մի շրջաբերական հեռազեր չնորհակալութիւն լայտունելու բոլոր նոցա, որոնք ուղերձներովի նամակներով, հեռազերերով կամ այլ կերպ արտադրուել են Նորին Մեծութեան իրենց զգացումները վեհ մարդասիրական գործի օգտին ստանձնած նախաձեռնութեան համար:

Կանքերենցիալի գործերի հիմքը կազմելու է Ռուսաց կալսեր ոչ թէ 12. օգոստ. 1898-ի, այլ երկրորդ հաղորդադրութիւնը. ԳԻՒՊԱԿԱՆ-ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ Անդրկովկասում, Կովկասի քաղաքացիական իշխանութեան բժշկական մասի կառավարութիւնը պրոէկտ է մշակել՝ ուժեղացնելու համար դիւղական-բժշկական շտատը, 200.000 ռուբլու վարկ բացանելով. Դորա համաձան 5 նահանգներից ամեն մինում պիտի լինի մի-մի օգնական բժշկական դեսչի 1.400 ռ. ռոճկով ամեն մէկին, ապա գաւառակավին (ուշասորկավին) դիւղական բժշկներ թիֆլիսի նահանգում 18, Քութափիսի 20, Բաքւակ 12, Գանձակի 16, Երեսնի 14, ամեն մէկին 1.175 ռ. ռոճկով. նոյն թով աւագ բժշկական ֆէլշչեներ ամեն մի նահանգում 300 ռ. ռոճկով ամեն մէկին. Կրտսեր ֆելզչեներ կրկնակի թւով՝ 240-ական ռուբլի ռոճկով. Փելզերուհի-մանկաբարձուհիներ նոյն թով որքան ամեն նահանգում գաւառակավին դիւղական բժշկներ պիտի լինեն, 300-ական ռուբլի ռոճկով. ապա պիտի տրւի 120.000 ռուբլի 80 գիւղական հիւանդանոցների շինութեան, (ձև մահճակալ որդըում) վառելիքի, հիւանդներին կերակրելու, ծառաների համար, այս հաշով որ գիւղական հիւանդանոցներ լինեն թիֆլիսի նահանգում 18, Քութափիսի 20, Բաքւակ 12, Գանձակի 16, Երեսնի նահանգում 14, դեղերի համար ևս 32.000 ռ. բոլորի համար. դիւղանական ծախքերի համար աւելցնում է 400-ական ռ. ամեն նահանգին. բոլոր լիշեալ բժիշկներին ճանապահածախքերի համար լարկացնում է 22.600 ռ. տարեկան. Վարակիչ հիւանդութիւնների դէմ առնելու համար պիտի տրւի 3000 ռ. ամեն նահանգի համար (բացի խոլերայի և ժանդապիտի գէպքերից). Բացի այդ, միանւագ ծախքերի համար ևս շուրջ 1.000 ռուբլի ամեն մի հիւանդանոցի համար.

Կառավարչապետը կարող է մահճակաների թիւը ամեն մի հիւանդանոցում աւելցնել մինչև 10, համեմատ եղած միջոցներին. Կառավարչապետի խորհուրդը այդ պրոէկտը հասրադեց միան մի քանի փոփոխութիւններով. Այդ բոլոր հիմնարկութիւնները պահպանելու են զեմսուակին բիւղեով, որպէս առաջ էր ԶՈՒԼՅԻ ԵՐԿԱԹՈՒԽՈՒՅԻ ԽՆԴԻԲԻԾ ուսումնասիրութեան շրջանումն է. Ենթադրում է երկաթուղին Ալէքսանդրապոլի մոտից անցկացնել մինչև Երեսնից 12 վերաբ հեռու և ապա մինչև Զուլֆի Խոզին հետա-

զոտելը լանձնւած էր ինժեն, Ե., Գ. Վուրցէլին, որը ներկայացրել է իւր զեկուցումը. նորա ծրագրով ուղին պիտի սկսի Ալեքսանդրապոլից 6 վերսու հեռու, հասնի Ուլուխանլու գիւղը. Թողնելով Երեւանը 12 վերսու վրաչ գիծը պիտի անցնի մինչև Զուլֆի Առաջին 20 վերսու մինչև Ղեղաջ գիծը անցնելու է խիտ բնակեցրած տեղով, լաւ վարելահողերով, որոնք հասնում են Բուղաշէն գիւղը, զծի սկզբից 35 վերսու. ապա դալիս է 50 վերսու անբնակ և անջրդի տեղ Ծուրը պիտի արհեստական կերպով անցկացնել Արփաշալից, չինելով ջրամբար 30 սաժէն բարձրութեան վրավ, որով պիտի մատակարարւեն երեք կաչարանները. ապա գալիս են անընդհարութանակներ՝ բրնձի և բամբակի դաշտերով. Ծախսը հաշւած է 13 միլիոն, որի մէջ 442.750 ռ. առանձին ճիւղի համար մինչև Երևան Փետրւ. 11-ին երկաթուղարքին դեպարտամէնտում, սորա գիրեկորդ պ. Մաքսիմովի նախագահութեամբ լանձնաժողովի նիստ կաջացաւ, որը կարծիք էալինեց թէ առաքմ պիտի չինել գիծը Ալեքսանդրապոլից Ուլուխանների միջով մինչև Նախիչևան և Շախմետախթի մաքսակին կաչարանը:

ԿԱԽԵՑԻԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԿԱռուցանելը լանձնւան է իշխ. Ն. Գ. Շահնաւաճէլին:

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԱՐԴՆԻԱԿԱՆՆԵՐԻՑ ԽՈՇՈՐ ՆԽԵՐԸ, Քութայիսի ազնւականութիւնը հաւաքւելով նահանգական արդակարգ ժողովի, փետր. 28-ին կայացրեց շատ կարևոր վճիռ. Նահանգի ազնւականաց Միքայէլեան հողակին բանքայի հիմնադիրների անդամակցական վճարներով գովացրած էր բանքայի հիմնական դրամագլուխը 30 տարի առաջ. պետական խորհրդի 25 մայիսի 1898 բարձրագոյն հասուագրւած կարծիքով՝ այդ դրամագլուխը կարող է վերադարձնել հիմնադիր-անդամներին. Ազնւականները այդ դրամագլուխը կազմել էին ազնւականաց նահանգական ժողովի վճռով, այն գումարների 10 տոկոսից, որ բարձրագոյն շնորհեցին նոցա իբր վարձարութիւն այն դուռքերի և ծառակութիւնների, որ նախկին ճորդերը դալիս ու անում էին ազնւականների օգտին. Այժմ, Քութայիսի ազնւականութիւնը, իւր արդակարգ ժողովում, միաձան վճռեց չօգումել այդ վճարադարձնելիք հիմնական դրամագլուխից, այլ խնդրամատուց լինել որ այդ դրամագլուխը կոչւի «Միքայէլեան» (Միծ իշխ. Միխաիլ Նիկոլաևիչի անունով, ինչ անունով որ բանքան է կոչում), լանձնել այն նահանգական ազնւականութեան՝ միակ նպարակով որ վերջինս գործադրի այն նահանգի կրթական պէտքերի համար. Ընդուեց լանձնաժողով, որը պիտի քննի թէ ինչ տեսակ դպրոցների վրաչ պիտի մոխել գումարը՝ ազնւականութեան պահանջների համաձայն, և այդ նւիրաբերւած դրամա-

գլուխը կաղմում է ոչ պակաս բացմի քիչ աւելի քան... 450.000 ռ.՝ Աւելցնենք որ թիվի իսկ ազնւականաց բանքայի հիմնադիր-անդամները նույն իմամբ ունին եղած սորանալու այդ բանքայի հիմնական դրամագլուխ 100.000 ռուբլին, և վրայ մամուլն ու հասարակութիւնը եռանդով քննում է ան իսոդիրը թէ ինչ ազգօդութ գործի պիտի նշիրի անդ գումարը. աւելի հաւանութիւն է գործում առաջարկը չօգուտ մի միջնակարգ օրիորդաց դպրոցի նահանգի ազնւականների աղջիկների համար.

ԹԻՖԼԻՍԻ ԱԶԴԻԱԿԱՆԱՅ ՆԱՀԱՆԳԻ. ԺՈՂՈՎԸ, որ կալացաւ մարտի սկզբներին վճռեց ինդրամարտուց վիճել զաւուական ինքնավարութիւն (գեմսուօ) մոցնելու թիվիսի նահանգում, և արագացնելու կալածական սահմանաչափութիւնը.

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՂԱՐԻԵՍՍԱՀԱՆԴԵՍԻ. որ կալանում է պարբերաբար, ալս ուրի բացեց մարտի 28-ին զինուրական-պատմական թանգարանում. Հանդէս բերւածների մէջ նկարելի են մանաւանդ ծերոնի Զանկովսկու, պայ. Բաշինջաղեանի, Գաբաելի, Յակոբեանի, Շմերլինցի նկարները և Խողորովիչի քանդակները. ի ցուց են դրւած, բացի այլ բեղական նկարիչների գործքերից, նաև հանգուցեալ Կոլչինի և տեղացի սիրողների գործքերը. Ընդամենը ի ցուց են դրւած 232 գործքեր. Պր. Բաշինջաղեանը հանդէս է բերել Սևանակ լիճը լուսակների, Ալիքի գետը Երևանեան նահանգում, Անդառ. Բորժոմուս, Սանահինի մօտ և այլ գործքեր. պ. Զանկովսկին՝ Մեծ լեռնաշթափի տեսարան, Մեծ Արարատ, Էլբրուս և այլ նկարներ. պ. Գաբաելը ի ցուց է դրել Վլաց դիւզական ուժագուշակութիւնների ուօն մեծ պատկերը. պ. Յակոբեանը՝ բեղական ազգութիւններից տիպեր.

ՄՌՍԿԻԱՅՑՅ.

Ճաշկերոյթակ. Ալ. Ծատուրեանին. Մեր աշխատակից պ. Ալ. Ծատուրեանի «Բանաստեղծութիւնների» 2-րդ հատորը լուս տեսնելու առթիւ որդէս գրում են մեզ, համակրողների մի խումբ ճաշկերոյթով պատւեց երիտասարդ քանաստեղծին «Խոսնիա» առաջնակարգ հիւրանոցում. Մի ընդարձակ և համակրալից ճառով ողջունեց նորան իրաւաբան պ. Սո. Մամրկոնեանը և ապա «մի խումբ համակրողներից» ընծառ դրւեց մի շքով արծաթեալ թանաքաման իւր սարգով, որի վրայ մակարութ էր «Մուրճ»-ում տարւած և «Բանաստեղծութիւնների» 2-րդ հարորը մրած ան երկարողը՝ Որը ազդի երգիչ վիշտը չէ անվերջ, Զաւրթ, լուս օրեր կը տեսնեմ և դու...», Կեր ու խումը, ճառախօսութիւնները, մրերմական խօսք ու գրուցք երեկոնեան ժամը 8-ից դեմքին մինչև խորըն գիշեր,

— Ճնշե՛ ժողովածուն, Մեզ գրում են թէ սուն մարտին Մոսկվակում

վեսելովակալա տիկնոջ (որ երիտասարդ հալագէտի մարմնէ) խմբագրութեամբ լուս տիեսաւ „Անօ“ (=Գործ) անունով մի ժողովածու, որ վաճառւումք է Ականանց բժշկական ինստիտուտի» օգտին, Խմբագրող տիկինը ուսուաց զրականութեան մէջ լաւոնի է իրեն բեղմնաւոր թարգմանչն և ուսու մարդենագիրների մէջ վակելումէ մեծ լարգաճք. ժողովածուն շատ ճոխ է և բազմարովանդակն, մասնակցում են նշանաւոր գրողներ, Զերեղւած է նաև Ռ. Պատկանեանի «Հազարէն մէկը» և Ծառուբեանի «Պօէտին» և «Երկու գիշեր» որուանաւորները պ. իւրի Վեսելյովիկու թարգմանութեամբ, «Պօէտին» որուանաւորը ուպաւած էր Մուրգի «Տասնամեակի համարի մէջ, որից և թարգմանւած է. իսկ անրկու գիշերը» վերջրած է «Բանասրեղծութիւնների» առաջին հատորից:

ՀԱՅԱՐԱԿԱՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ Թիֆլիսում: Այդ կուրսերը բացւեցան Յունի. 26-ին; երեկոյեան, առաջին իգական գիմնազի շնութեան մէջ Քաջման հանդէմը սկսեց ժամասացութիւնով գիմնազի լադուկ եկեղեցում. ժամասացութիւնը կարարեց Արասդանի էքպարի Ֆլակիան, գործակցութեամբ ուղղափառաց սեմինարիայի ռեքտոր Դերմոգէն վարդապետի և նոյն դպրոցի կրօնուսուց Խոհան քահանաց Վոսորգովի, Մաղթանքից և օրնուութիւններից լիուու, որ կարարեց էքպարիւ, Վոսորգովի քահանան քարոզ խօսեց գիտութիւնների մասին, որպէս օժանդակ միջոցի քրիստոնէութեան գաղափարները հասկանալու համար Ներկաւ էին 274 հօգի կուրսերին ունկնդիր լինել ցանկացողները, այլ և կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու և. Պ. Եանովսկի, Կովկասեան ուսումնարանական շրջանի շրջանակին բեսուչներ Զաւադսկի, Լոպատինսկի, Պոեղական միջնակարգ դպրոցների վերադասուչներ՝ գեն. Սմիրնովի գնդապ. Կոլիւրակին, Մարկով, Դրբովլաւ և ուրիշներ, Ժողովրդական դպրոցների վերաբեսուչ Դրոգդով, մամուլի ներկայացուներ, կուրսերի հիմնադիրները, դասախոսները և այլն. Քարոզից լեզու ներկաւ եղողները անցան լսարանի դահլիճը, ուր ուսուցիչ Մ. Ն. Կարպինսկին կարդաց առաջին լեկցիան ուսուաց գրականութեան պարմութիւնից. ապա առաջին իգ. գիմնազի վերադասուչ Կ. Ն. Շուլգինը պարզաբանեց կուրսերի ներքին կանոնները, որոնց պիտի հերեն ունկընդիւնները, Կուրսերը սկսում են երեկոյեան ժամ 8-ից և գեւում մինչև 9-ը, մի-մի ժամ ամեն առարկալից, օրը ուրեմն երեք առարկալ Առարկաներն են ուսուաց գրականութիւն, ուսուաց աշխարհագրութիւն, մարդակազմութիւն (անառոմիա), երկրաշափութիւն (գէօմէտրիա). Ուսուիալում միակ լիակատար ժողովրդական կուրսեր կան միան Օդեսական, իսկ այլ քաղաքներից ումանց մէջ միան փորձեր են լինում.

ՄԱԳԻԱՆ ՆԵՅՄԱՆ-ի գիրքը ՀԱՅԵՐԻ մասին, որի սրացումը ծանուցանում
ենք նոր գրքերի ցուցակում, ներկազնանում է որպէս ծպիեալ աշ-
խարասիրութիւն պ. Գր. Նիկողոսեանի, որ դեռ չի նշանակում թէ
նւազ հետաքրքրական է, Գրքի սկզբից մինչև վերջը պ. Նիկողո-
սեանն է որ խօսում է, երբեմն առանց անունը լիշտելու, բայց մեծ
մասամբ լիշտելով, և այն՝ այս ձևերով, «Ալդ մասին առաջ կը բերեմ
հայոց պատմութեանը և գրականութեանը հմուտներից մէկի՝ Գ. Ն.
Նիկողոսովի խօսքերը» (էջ 32). և կամ «Ալդ ժամանակ առանձին
լաջողութիւն ունէր հայոց պատրբերական մահուլի սէջ...» ուրաքանչիղ
գորքի երիտասարդ սպաէ Գ. Ն. Նիկողոսով» (էջ 25—26). «Դեռ դո-
րանից առաջ նա (Նիկող.) լայտնի զարձաւ հայերին իւր գործու-
նէութիւնով, երբ ուսւները գրաւեցին Երզրումի վիլաւէթը...» (26).
«Նորա ոգեսրաւծ լոդւածները... ազդեցութիւն գործեցին ժողովրդի
վրաէ...» Պր. Նիկողոսովի արդքան ցաւակից վերաբերմանքը դէպի
թիւրքաց հայերի վիճակը...» (38). «Որքան և ծանր էր պ. Նիկո-
ղոսովի իրեն առաջադրած խնդիրը, բայց նա այն լաջողութեամբ լուծեց
երեք տարւակ աղմկալի գրական կուռփ» (էջ 39). «Անցնում է տասը
տարի: Արդէն բոլորովին հասունացած և հոչակ սրացած հրապա-
րակախոսը (Նիկող.) վերադառնում է կովկաս» (41). և կամ՝ «Ալդ
ամենը մեզ պարզում է Գրիդ. Նիկ. Նիկողոսով իւր ձեռագիր աշ-
խարասիրութեան մէջ» (այս ինչ. Խորագրով), որից և բերւում է
քաղաքածք էջ 67-ից մինչև 131-ը! Եւ այսպէս շարունակ մինչև գրքի
վերջը:

Ալ խօսքերով՝ սա, այսպէս ասած, պ. Նիկողոսեանի գործքն
է, հրատարակւած մի տիկնոջ անունով՝ որպէս զի պ. Նիկողոսեանը
կարողանաւ լիշտել գովասանական ածականների մի ամբողջ բառ-
գրքով, որ անչարմար կը լինէր անել, եթէ գրքի իսկական հեղի-
նակի անունը գրքի հակատին դրւած լինէր:

Գիրքը բաղկացած է շորս գլուխից. 1) «Լուսաւորութիւնը և
գրականութիւնը հայերի մէջ. նոցա ծառալութիւնները Ռուսակում,
թիւրքիանում, Պարսկաստանում և ալ սկսութիւնների մէջ», 2)
«Հայոց ազգի պատմական կեանքի քննական դնահարութիւնը», (մի
ընդարձակ քննութիւն է Գ. Պատկանեանի հայեացքների), 3) «Հա-
յոց ազգի մասին». (Հայերի գլխաւոր լարկութիւնները, պարապ-
մունքները, մանաւանդ ուշք է դարձրած զարաբաղցոց վրաէ), 4)
«Հայոց ինուելլիգէնցիան Ռուսակում» (ամբողջապէս Նիկուած է
Գ. Արծրունու և նորա առաջացրած կուսակցութեան քննութեան
պ. Նիկողոսեանի հայեակէտից, և Նիկողոսեանի գործունէութեան
իւր հակապարկերի),

Գրւած է գիրքը ջերմ ոճով, որը կարդացնել է ուղիս գիրքը առանց դադար ուղարկու Ունի բազմաթիւ շատ հետաքրքրական էջեր՝ հայոց ազգի անցեալի ու ներկայի գնահատութեան վերաբերեալ. բայց շատ ու շատ բան էլ սփսորեմաբար խնդաթիւրւած է Սրծրունուն կառարելապէս ցեխի հետ հաւասարցնելու և կառավարութեան աշ-քում էլ «անբարելու» ցոյց տալու համար, որպէս զի Նիկողոսիանը ինքը որպանով կարողանաւ իւր համար մի բարձր պարւան-դան սորեղծել թերես մեզ էաջողի ալս վերին ասորիմանի իւրագո-սակ գրքին վերադառնալ գալ անգամ:

Թիֆլ. ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԽԹԻՒՆԸ սկսել է արդէն ակնկալինի կերպ, զ ծառակել մասնակի շահերի, Ալլապէս չի կարելի բացառընել թէ ազդ ինչպէս ընկերութեան խմբագրական մասնաժողովը կարող էր վճռել ու ընկերութեան հաշըով տպագրել ուղի մի գիրք, որի առարկան մի վիճելի առարկաէ և որի հեղինակը վիճելի ինդիբ-ները հեղինակօրէն վճռելու համբաւ չի վաստակել մինչև ազժմ. Վիճելի առարկան՝ Մովսէս Խորենացու Պատմութեան վաւերականութեան խնդիրն է և մասնաւորապէս աչն թէ որ դարու գրութիւն է աչն. Վերջինի մասին 1893-ից սկսած երեցել են մի շարք պարկառելի քննութիւններ, որոնց հեղինակները լիշեալ Պատմութիւնը ներ-կայացնում են իրք գրւած ոչ հինգերորդ, ալլ եօթերորդ, ութերորդ, իններորդ զարում. Ո՞րն է ճիշդը, որը սիաւլ—ազդ կ'լաւոնւի լուրջ հետազոտութիւնների շարունակութիւնից. թող ազդ լուրջ ուսումնա-միրութիւններից մէկը լինի հէնց պ. Սո. Մալխասեանցի «Սիերէոսի պարմութիւնը և Մ. Խորենացի», ուր ուսումնակութողը աշխարել է ցոյց տալ, թէ եօթերորդ զարի կէսերում արդէն Խորենացու պար-մութիւնը լարունի էրու. Դիրքը զեռ նոր է լուս դեսած և զեռ շգիտենք թէ պ. Մալխասեանցը ինչպէս է վերաբերել զէպի գործը. բայց ալս որպէին մեզ զրադեցնողը սա է թէ ազդ ինչպէս է պարահում, որ, բանակուական շրջանի մէջ զտնւող մի ինդիրի վերաբեր-մամբ, Թիֆլիսի Հայոց Հրաժարակական ընկերութիւնը մի ամբողջ գիրք է տպում իւր հաշով, մի գիրք, որը ոչ թէ ամփոփումն է խըն-դրին վերաբերեալ բոլոր գրւածների, ալլ որը միաւն ցոյց է տալիս պ. Սո. Մալխասեանցի մասնակի վերաբերմունքը զէպի մի վիճելի խնդիրը Հրաժարակիչ ընկերութիւնը կարող էր տպել գրականութեան զանծ ներկայացնող Գարագաշի «Քննական պարմութիւնը», որքան էլ վիճելի կէտեր ևս ունենար ալդ. Կարող էր տպել «Մովսէս Խորե-նացու Պարմութիւնը», որը որքան էլ վիճելի լինի վաւերականու-թեան կողմից, բայց նշանաւոր գիրք է մնում անուամենախիւ. Կա-րող էր նոյն իսկ տպել շարք բոլոր լուրջ քննադադութիւնների Խո-

թենացու մասին, բայց զալ ու հասարակաց գումարով բանել միմիան պ. Մալխասեանի ունեցած կարծիքը ինդղի մասին, — դա ծառալութիւն չէ գրականութեան, ազ ծառալութիւն... պ. Մալխասեանին իրեն!

